

բնաբանական և չափաբերական գիտութիւնն, զոր օգնական առած ճարտարագոյն արուեստագէտն՝ այսօրուան օրս կատարելութեան ժայրն հասուց այն արուեստը, ժամագործութեան ամենէն էն գեղեցիկ աշխատութիւններն ջուիցերի կը մատակարարէ, Պրզանսոնի գործարաններն ի Գաղղիս ընդհանրապէս անուանի են. նաև Անդղիս իսկ ետև չմաց :

« Նէօշագեի նահանգը կը պարծի Պէրթու, Պրէէէ, Փրեգերիկ Հուրիէդ (Houriett), Ցիւ Լոքլ (Du Locle) երեկի ժամագործաց խանձարուրք տրած ըլլալուն համար: Ժընեւ ալ նոյնպէս ճարտար արուեստաւորներ և անուանի մեքենագէտներ ունեցաւ: Ժարին 100000 ժողի ժամացոյց կը շինուին ի Ժընեւ, և 7000 գործաւորք կը բանին անոր արուեստանոցներուն մէջ: Նէօշագէլ 800000 ժողի ժամացոյց կը շինուին և 30000 աշխատաւորք կան գործատանց մէջ: Գերմանացի մը (Wagner) բազմաթիւ և զանազան ձևով

ժամացոյցներ շինեց, որոնք շատ մը հասարակաց շէնքերու զարդ են»:

Ժամագործութեան արուեստին վլրայ շատ բան դրուած կայ. և ամեն հնարյանի իրենց զիւտերուն արգիւնքը գրուածքով ալ աւանդած են.

Այսպէս Լըրոդ թողոց Ճան մը՝ ի վերայ ժամագործութեան է. Հիւկէնս Ռուիկին զ վրայ, զոր ինքը հնարյարէր, լատիներէն գրուածք մը շարադրեց. Ֆերտինանտ Պէրթու 1802ին գրեց նոյնպէս ժամանակի չափին զ վրայ. և վերջապէս Մրուանէ, գեղեցիկ պատկերներով զարդարեալ երկու հատորներու մէջ ժամագործութեան մեջ բենական գիտութեան սկզբունքը և կանոնները հմտաբար հաւաքած է:

Այս յօդուածս ալ այն գրուածքին արուեստական մասէն զիսաւորապէս քաղաքաւած է:

1 Traité d'Horlogerie.

2 Le Régulateur.

3 Mesure du temps.

Զ Ա Ն Ա Զ Ա Ն Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Հեռագիրն յԱփրիկէ. — Անդղիերէն օրագիր մը (Itron) կը ժանուարանէ թէ խորհուրդ կայ հաստատելու հեռազրական զիծ մը Ափրիկէի ամիողջ ցամաքին վրայ մինչև Բարեյտուսոց գլուխը: Հարկաւոր քննութիւններ եղեր են երկարաձգելու մինչև կոնտոյ-ֆորց այն հեռագրական թենն որ ներկայապէս կը կապէ Սլեքսանդրիս ու Խարիթում իրարու հետ և է 1100 մղն: Խարիթում մէն մինչև Տէլակոա (Delagoa) ըսուած ծովածողը, ուր կը լմիննան գէպ ՚ի հիւմս՝ Ափրիկէի հարաւային գծերը, գրեթէ 2000 մղն է, որ մեծ բան մը չէ համեմատելով միւս երեք ցամաքաց վրայ գտնուած թենելը ու երկայնութեանն հետ:

Այս հեռագրական թելը պիտի անցնի վիկտորիանիանզա ու Դանկանիքա լիճերուն վրայէն և պիտի հասնի մինչեւ ծով հետեւլով Զամպէզէ գետոյն ընթացիցը: Ուրիշ կարճ զիծ մ՞ալ այս թելը պիտի կապէ Բորդ-Նադալի կայրանին հետ:

Բանանայի պարանոցը. — Բանանայի պարանոցին կտրելու խնդիրն, ուրուն երեսուն տարուցնէ ՚ի վեր կ'աշխատին անդղիացի ու գաղղիացի և ամերիկացի ճարտարապեսք գովելի յարաւեսութեամբ, վերջապէս լուծուերէ ՚ի նպաստ Նիգարակուայի ճամբառն: Այս նոր լրանցքն որ պիտի միացունէ իրարու հետ Աթլանդական Ավկիա-

Նոսը և Խաղաղական Ռվիվիանոսը, պիտի ինային տայ թէ պատերազմական նաւուց և թէ վաճառական նաւուց այն անհուն շրջանը որ հարկադրուած են միշտ կատարելու Մակելյանի նեղուցին անցնելով՝ հարաւային Ռմերիկայի ժայրը մէկ ծովէն միւսն երթալու համար։

Ուստի Բանամայի նեղուցը թէ վաճառականութեան և թէ ընդհանուր նաւարկութեան շատ աւելի մեծ ծառայութիւն պիտի մաստուցանէ քան թէ Ամերիկայի նեղուցը և մեր դարուն մեծագործութեանց մէկը պիտի ըլլայ։

Բայտ հաշուի ճարտարապետաց, որոնց ծրագիրքն ընդունելի եղան, Բանամայի պարանոցին բացման ժամաբը կը համնի իրը 328 միլիոն ֆունդ։ Բայց շատ մը քաղաքական ճարտարապետներ, որոնք մասնաւոր քննութիւններ ըրեր են այն կողմանց տեղագրութեանը վրայ, ուսկից պիտի անցնի ջրանցքը, կը համարին թէ գործադրութեան ժամանակ ծանր արգելք ընդ առաջ պիտի ելլին. անոր համար այս մեծ ձեւնարկութեան համար կ'ըսեն թէ 500 միլիոն ֆունդ ծախք կ'երթայ, ջրանցքին բոլորական երկայնութիւնը պիտի ըլլայ 180^{3/4} մղոն։

Նաւերն այս երկայնութեան 64 մը զոնը Ս. Ցովհաննէս գետոյն վրայ պիտի ընթանան, և 56 • մղոն ալ Նիդարակուայի Ծին վրայ, որով միայն կը մը նան իրը 64 մղոն ցամաք՝ ջրանցք փորուելիք։

Ընդհատական լիձ մը. — Աւատրիոյ կայսերութեան Լիւրիկիոյ գաւառին մէջ լիճ մը կայ (Zirknitz), 8 քիլոմէտր երկայն և 4 քիլոմէտր լոյն, որ ամէն ատրի մայիս ամնէն ետքը կը սկսի շուրջ մը քաշուիլ և քիչ ժամանակէն բոլորովին կը ցամքի։ Այն ատեն որոշ կը տեսնուին այլ և այլ խոռոշներ, ուսկից ջուրը քաշուեր է։ Այս խոռոշներէն ոմանք ուղղաձիգ բացուածք ունին, ոմանք ալ կողմնակի կամ խոտոր, և ստորերկեր անձաւներու կը տանին, որոնք շրջակայ լե-

րանց մէջ բազմութեամբ կը գտնուին։ Զուրը քաշուածին պէս տեղացիք շուրջ մը այն լիճն յատակը կը մշակեն, և քանի մը ամիսէն կը հնձեն խոսու ու կը քաղեն կորեակ և հաճար, մինչ յառաջադ ոյն տեսակ տեսակ ձուկ կ'որսային։ Անան վերջերը երբ անձրիւները կը վերադառնան, ջուրն ալ կը սկսի նորէն բղիսել մի և նոյն խոռոշներէն, ուսկից որ քաշուեր էր։ Դիտեր են որ այն այլ և այլ խոռոշները մէկմէկէ շատ տարրեր են. ոմանցմէ միայն ջուր կը բղիսի, ոմանցմէ ջուր ու մեծ կամ պըզ-ափի ձուկն միանդամայն, ոմանցմէ ալ ստորերկեայ լիճ մը կ'ելլեննան ջրային բադեր։ Այս բադերն որ երբ ջրոյն մակը ընթացութեքը երկիս երեսը կ'ելլեն, շատ լաւ կը լուսան, բայց բոլորովին կոյը կ'ըլլան ու գրեթէ անփետուր։ Քիչ ժամանակէն աչքերնին կը բացուի, և շուրջ մը փետուրնին կը բունի վերէն վար սև, այնպէս որ երկու երեք շաբաթէն կը սկսի թռչել։ Ասոնցմէ բազմութեամբ կը բռնեն տեղացիք։

Աղիուրիւն ծովու. — Հաշիւ եղերէ է որ եթէ ծովուն բովանդակած ազը ցամաքին վրայ տարածուի, եօթը միլիոն քառակուսի մղոն տեղ կը ծածկէ, մէկ մղոն հաստութեամբ, և բռնած բովանդակ տեղը հաւասար կ'ըլլայ հինգ անգամ Ալպեայց։

Երկրիս երեսն եղան ջրոյն քանակուրինը. — Օրուան քամնը ըստ ժամաց մէջ ամեն ծովերը թափուած ջրոյն քանակութիւնը կրկնապատիկն է երկրիս վրայ եղած բոլոր գետերուն բովանդակած ջրոյն քանակութեանը, բայց այս մեծ ազանգուած ջուրը գրեթէ ոչինչ է համեմատութեամբ ծովուց մէջ բովանդակուած ջրոյն։ Համարենով որ բոլոր ծովուց միջական խորութիւնն ըլլայ հինգ քիլոմէտր, զիւրին է հաշուելն որ անսոնց մէջ բովանդակուած ջրոյն տարածոցը կը հանի երկու երկիսնին (2,000,000,000) խորանարդ քիլոմէտր։ Երկրիս մակերեսութիւն վրայ վա-

դող ամեն գետերը իւրաքանչիւր 24
ժամնւն հազիւ թէ 200 խորանարդ քի-
լմէդը ջով ծով կը թափեն, որ է ըսել
քսան հազար միլիոներորդ մասն ծովու-
ջրոյն, որով պէսօք է որ անընդհաստ գի-
շեր ու ցորեկ վազեն քսան հազար մի-
լիոն օր, այսինքն իրը երեսուն հազար
տարի, որպէս զի ծովուն խորքը լեցուին
եւ այս ամենն համարելով առ բոլոր
այնչափ ժամանակուան մէջ ջուրին ա-
մենկին կորուստ մը ջընէ, ոչ շոգիաց-
մամբ և ոչ մզմամբ: — Սակայն որչափ
ալ մեծ ըլլայ ծովուց մէջ բախնդա-
կուած ջրոյն քանակը, ոչինչ բան մ'է
երկրիս մեծութեանն հետ բաղդատե-
լով: Վասն զի պարզ հաշուսվ մը կը
ցուցուի որ բոլոր այն ջրոց տարա-
ծոցը և ոչ կէս հազարերորդ մասն է
երկրիս բոլորական տարածոցին:

Թուշնոց բունի մը արժէքը: — Գեր-
մաներէն օրագիր մը կ'ըսէ. Սլիբեկի երկ-
բադործ, քու որդիկ կը վերցունէ
թուխկատարին, կարմրալանջին, ճռճ-
դուկին կամ ուրիշ թուշնոց բայներն ա-
նոնց հաւկիթներովը՝ կամ ձագերովը:
ենթադրենք թէ բայնի մը մէջ հինգ
ձագ ըլլայ: Իւրաքանչիւրն այս ձագե-
րէն օր ըստ օրէ կը սպառէ 50 թրթուր
կամ ուրիշ որդ:

Այս սպառումը կը տեէ 4 կամ 5 շա-
րաթ. միջական հաշուսվ առնունք 30
օր, որով իւրաքանչիւր բայնը կը սպա-
ռէ $50 \times 5 \times 30 = 7500$ օրէ: Ամեն մէկ
թրթուրն օր ըստ օրէ ծանրութեանն
հաւասար ծաղիկ, տերեւ, և այլն կ'ու-
տէ, մինչեւ որ իր կատարեալ աճումն
առնու. այնպէս որ 30 օրուան մէջ օր
ըստ օրէ ծաղիկ՝ մը կ'ուտէ, որ պտուղ-

մը պիտի տար: Որով թրթուր մը 30
օրուան մէջ կ'ուտէ 30 պտուղ, և այն
7500 թրթուրները կ'ուտեն 225000
այսպիսի ծաղիկներ:

Եթէ որդիկ տեղէն վերուցած չըլլար
այն բայնը, չէին փամանար 225000 խլն-
ձոր, տանձ, ծիրան, դեղձ, և այլն:
Ահաւասիկ այս է թաշնոց բունի մը
արժէքը:

Հակայ Զանգակակը: — Աշխարհիս ամե-
նէն մեծ զանգակը Մուկուսյինն է, որ
իրը 200940 քիլոկրամ կը կշռէ, այսինքն
456645 գրքա: Այս զանգակը կարելի
չեղաւ տեղը կախել, և մինչեւ հիմա մնա-
ցեր է ուր որ ձուլուեցաւ:

Երկրորդ մեծ զանգակը գարձեալ
Մուկուս կը գտնուի Ս. Յովիչսաննէս ե-
կեղեցին, որ իրը 57600 քիլոկրամ
կը կշռէ, այսինքն 45000 գրքա: Այս
զանգակն ալ բարձրէն վար ընկաւ յա-
մին 1855:

Երրորդ մեծ զանգակն է Բէքինինը,
որ կը կշռէ իրը 50800 քիլոկրամ, այս
ինքն 39600 գրքա:

Այս հականերէն ետքը կու գան Բա-
րիզու Տիրամօր (Notre-Dame) եկեղե-
ցւոյն զանգակը իրը 17240 քիլոկրամ
կամ 13440 գրքա. Գոլոնիսյի մայր ե-
կեղեցւոյն համար ձուլուած Kaisercloke
զանգակն, իրը 14440 քիլոկրամ կամ
8840 գրքա. Օքսֆորդի Great Tom ա-
նունով զանգակը, իրը 7744 քիլոկրամ
կամ 6030 գրքա, ասկէ քիչ պակաս
կը կշռէ Հոռոմայ Ս. Պետրոսի մեծ զան-
գակը. իսկ Ս. Պողոսի զանգակն աւելի
պզափիկ է, և կը կշռէ 3628 քիլոկրամ
կամ 2839 գրքա: